

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԳ. ՊՐԱԿ Գ.

1885

ՅՈՒԼ. ԱՒԳՈՍՏ. ՍԵՊՏ.

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈՒԼԵԱՆ

(Տէս էջ 24, 97).

է

ՏԻՐԱՄԱՅՐՆ ՀԱՅՈՑ

Ուժ հարիւր կամ աւելի կամ սա. կաւ մի պակաս տարիներէ մինչև ցայս. օր, այդ սրբազան աւանդն ազգիս, որ ընդ համօրէն լեհաստան հռչակեալ է որանչեղեօք, միշտ Հայոց անունը կը. բաժնէ քէր Մովսէս Գորոնովիչ Ռուս երէցն կը գրէ. «Սրբազնագոյն և մե. ծաղին աւանդ. կամենիցի Հայոց կրօ. նական կենաց՝ եղած է և է միշտ մին. չև ցայսօր, Հայոց Ս. Նիկողայոս եկեղե. ցոյ մէջ պատուեալ Տիրամօր Պատ. կերն »: Հեղինակն կամենիցի Յիշա. տակարանաց Անտոնի. «Կամենիցի Հայոց եկեղեցոյն մէջ, յանուն սքան.

չեղագործին ¹ Նիկողայի, կը պահուի հնաւանդ յիշատակ մի. այն է սքան. չեղագործ պատկեր Սրբուհի կուսին Մարիամու: Այդ պատկերը՝ մեզ ան. ծանօթ հեղանիւթով ծածկուած մի տախտակի կտորի վրայ նկարուած է. Աստուածածին՝ ձախ ձեռքը Յիսուս մանուկը: Տիրամօր կուսին զլուսը ծածկուած է սև լաշակով, ըստ արեւ. լեայց, նոյնագոյն վերարկուն կրծոց վը. րայ հանգրիճած. լուսոյ ճառագայթք կը պատեն գլուխը, որոց մէջ կայ գրուածք մի՝ որ անընթեռնչի է. պատ. կերին ստորին ծայրը գրուած կայ լա. տիններէն. O Maria, mater Dei Christi. Պատկերիս ծագումը, տեղին, նկար. ման միջոցը, և նկարիչն անծանօթ են մեզ: Հմուտք արուեստին, ըստ վկա. յուժեան կալանոսի և Զօրբի, ոչ ա.

¹ Լեհք՝ առաւել ևս Ռուսք՝ Միւսոնայ հայ. բապտիստ յուսարիչ անականը կու տան. վե. բը ևս նոյնպէս գործածել է. Թարգմանութեան

միջոց Սրբոյն յատկացեալ Աքանեւազործ ա. ծականը գրի, միւսը ազգիս լուսաստուին յաա. կանիչ պահելով:

ունց հիման՝ ժ դարու դրոժ կը համարին զայն, և կ'ասեն՝ որ Հայք բերած են այդ պատկերը 'ի Սեաստոպոլէ 1334ին, Հայոց երրորդ և բազմաթիւ դաղթականութեան միջոց 'ի փոտոլիա՝ . . . Եւ որովհետև արդէն կար կամենիցի մէջ Հայոց եկեղեցի, յանուն սրբոյ կուսին, (այժմեան Ռուսաց Ս. Նիկողա եկեղեցին) դրած են հան: Ապա ժե դարու (հարիւր տարի վերջը, 1495ին) տեղափոխած է, ուր կայ ցայսօր: 1672ին Տաճիկք տիրելով կամենիցի, Լեհք՝ ըստ պայմանաց յաղթողին՝ հեռացան 'ի կամենիցէ. այլ Հայոց չեն թողուլ ելնելու, որով և նոցա մայրապետք կը մնան 'ի քաղաքին: Երկու ամիս մնալն երէն վերջը, առանց հալածանք կը բրուլ 'ի յաղթականաց, հրաման կ'ելնէ՝ որ հեռանան քաղաքէն. քուլթիւնք եղած են պատճառը... 'ի թիւս Հայոց կային 14 մայրապետ կուսանք: Սոքա ամսօրեայ մի ճանապարհօրդեւ լով կը հասնին յափն ծովուն, և կը մտնեն երեք նաւերու մէջ, յորոց մին 'ի ճանապարհին կ'ընկզմի, և այլ երկուքն կը հասնին 'ի Սիզապօլ քաղաք Տաճկաց: Անճար պանդուխտներն անմարդի կը գտնեն քաղաքը, զի նախընթաց տարւոյն ժանտախտը ջարդել էր անոր բնակիչքը, և ողջ մնացողն երթ թողել գնացել էին քաղաքը. սակայն Սուլդանին հրամանն այն էր՝ որ Հայք ներքին դաւառները չգաղթին: Հոն կ'անցընեն բովանդակ ձմեռը, գարնան (1673) կ'անցնին 'ի Մակեդոնիա գաւառն, ուր և ազատ շուռչ կ'առնուն: Կը շինեն իրենց համար եկեղեցի, ուր կը զետեղեն հետերնին բերած Հրաշագործ պատկերը, Այլ սէր Լեհաստան (երկրորդ) հայրենաց կը մաշէ նոցա սիրտը: 1675ին կ'որոշան մայրապետք լեռեայն՝ դառնալ վերստին 'ի Լեհաստան: Յաջողութեամբ կը հասնին 'ի Պուքարեչոյ, ուր Ուլխաց իշխանուհին իրեն մօտ կը պահէ զնոսա տարն ամիս: 1676ին կը հասնին 'ի Ըս.

զանեւաւով քաղաք: Իլվովի թորոսեւիչ արքեպիսկոպոսին խնդրանք, կ'անցնին մայրապետք 'ի Սթանեւաւովէ յիլվով, ուր Հայոց գերեզմանատան անշուք վանքին մէջ կը պատրաստարին: Այն միջոցին կամենիցէն ելնող մայրապետաց թիւը երեքի դարած էր. զի նոցանէ երեքն Հայոց լեզուն չգիտնալուն պատճառաւ՝ բաժնուած էին ընկերներէն. և այլ հինգն՝ պանդխտութեան միջոց վախճանած... Ինն տարիէ վերջը 1685ին, Հրաշագործ պատկերը իլվովի մայր եկեղեցւոյ մէջ կը զետեղեն, և Եղբայրութիւն մի կը հաստատեն Ս. Նիկողայոսի անուամբ: Եղբայրութեան մատենաները կարգաւորեալ ձևով գրուած են և ցարդ կը պահուին եկեղեցւոյ դիւանին մէջ: Երբ Տաճիկ կառավարութիւնն ձեռքը կը քաշէ կամենիցէն, Եղբայրութեան հոգաբարձու քահանայք՝ Ռոտփրիոս Աւանտովիչ և Ստեփան Բարուքովիչ՝ կը բերեն Աստուածամօր պատկերը, 22 մայիսի 1700, մեծահանգէս թափօրով, և կը զետեղեն Ս. Ստեփանոս մատրան մէջ, զոր առ ժամանակեայ կը յարդարեն Ս. Նիկող եկեղեցւոյ զանգակատան ստորին յարկին մէջ. վասն զի նոյն ատեն Հայոց երկու եկեղեցիքն և աւեր վիճակի մէջ էին: Կը գտնուի նոր բարեբար մի, Պոլտան Լատինովիչ, որ շուտով նորոգել կու տայ Աստուածամօր Աւետման մատուռը և կարևոր սպասները կը հայթայթէ: Աստ կը մնայ Տիրամօր Հրաշագործ պատկերը, մինչև որ նորոգի Աքանչեւագործ հայրապետին եկեղեցին 1767 »: « Թատեան 1767, օրն 22 օգոստոսի, եղև բերումն թափօրով Հրաշագործ պատկերին Երանուհւոյ կուսին, 'ի նոյն եկեղեցին »: Կը ժանուցանէ հին ճաշոցին նոր յիշատակարանը. և այդ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մէջ մինչև ցայսօր կը պաշտուի 'ի բազմախուռն ժողովրդոց Տիրամայրս Հայոց: Բաց 'ի սովորական ջերմեռանդութեանց և ութօրեայ վե.

1 Հեղինակն այս տեղ Հայոց երրորդ դաղ.

Թուով 1380ին կը գնէ, Թեկուս սխալմամբ:

րափոխման տօնին ցնծութեանց, տա-
րւոյն մէջ բոլոր շարաթօ օրերը նուի-
րեալ են Աստուածամօր պաշտամանն,
և միշտ խուռն բազմութիւն կը ժողո-
վի նոյն օրերը փառաւորելու և պա-
տուելու պատարագօք և երգօք զՏիրա-
մայրս մեր: Առ Աստուածամայրն ջերմ
եռանդութեան համար կայ տպուած
լեհ լեզուով աղօթամատոյց — երգա-
րան մի, որ զայս վերնազիրս կը կրէ:
« Երկրպագութիւն մեղաւորին 'ի պա-
տիւ և 'ի փառս Սրբուհւոյ կուսին Մա-
րիամու, որ հասանէ յօգնութիւն հա-
ւատացելոյն հրաշքաբառապէս, առ
պատկերին որ կայ 'ի ժողովրդապե-
տական եկեղեցւոյ Հայոց 'ի համենից
փոտղեան, յանուն Նիկիոյ պրանչե-
լագործ եպիսկոպոսին Միւսուսոյ » . որ
է տպագրեալ 'ի համենից, 1860: Այդ
երգարանը շատ անգամ տպագրուած
է. 1860ին տպագրուածին սկիզբը հե-
տևեալ տեղեկութիւնը կը կարդանք.
« Երանօթութիւն զպատկերէ Սրբուհւոյ
կուսին Մարիամու, որ համբաւեալն է
հրաշքործութեամբ յեկեղեցւոյ Հա-
յոց 'ի համենից »: — Միւսն ցարդ-
եղած մանր հեռագօտութիւնք, ինչ-
պէս եկեղեցւոյ դիւանին, նոյն և այլ
տեղեր շտուին մեզի հաւաստի տեղե-
կութիւնք Հրաշագործ պատկերին ծագ-
ման կամ հնութեան մասին. վասն զի
ամենայն դիւանական գրուածք Հայոց
եկեղեցւոյն կորսուած են թուրքաց 'ի
փոտլիա յարձակման միջոյ: Ստի-
պուած եմ հաւաքելու հաւատացելոց
աւանդութեամբ պահածը, մասնառ-
րապէս Հայոցը: Այդ աւանդութիւնք
ցայսօր պահուած են անայլայլակ առ
ջերմեանդ հաւատացեալս: Հաւաս-
տիք են աւանդութեանցս հին աղօթա-
մատոյցք. նորատիպքն կրած են սակաւ
այլայլութիւնք, մինչդեռ հինք՝ տասն
տպագրութեամբ 'ի լոյս ընծայուած են
անփոփոխ:

Հին աղօթամատոյցք միակ տպա-

1 Եթէ յերրորդ գաղթականութեան իւ-
րեանց 'ի Լեհաստան՝ բերած են Հայք հետեր.

գրեալ յիշատակարան են Հրաշագործ
պատկերին. նոքա միայն սրբազան ա-
ւանդապահք՝ անյիւրց ժամանակայ,
Եկեղեցական պաշտամունք, երգք և ա-
ղօթք կը յայտնեն մեզ ծագումն և ըս-
քանչևիք Պատկերիս. նոցա մէջ բա-
ցատրուած կը գտնենք նաև նշանա-
ւոր դէպքեր: Յիրաւի՝ անոնք բացորոշ
չեն գրուած, ինչպէս կը փափաքէինք
գիտնալ. սակայն և այնպէս լիուրի կը
համաձայնին բերանացի աւանդու-
թեանց արժանահաւատ մարդոց: Ա-
հա այդպիսի աղբիւրներէ հաւաքեալ
կ'ընծայի համառօտ տեղեկութիւնս՝
Հայոց Հրաշագործ Երանուհւոյ կուսին
Մարիամու Պատկերին »:

Չորս հարիւր ութսուն տարի ա-
ռաջ՝, այդ Աստուածամօր պատկերը
բերած են Հայք 'ի Սևաստօպոլէ 'ի
կամենից փոտղեան, և դրած յեկե-
ղեցին Աքանչեւագործ հայրապետին,
ուր կայ մինչև ցայսօր. վասն զի Հոյք
հալածուելով 'ի Մալիմանց, և չկարե-
նայով այլ ևս գիմունալ նոցա, ժողովրդով
իրենց կայրք և Հրաշագործ պատկերս
գաղթած են 'ի կամենից: Այդ պատ-
կերը կամենիցի մէջ միշտ նշանաւոր ե-
ղած է հրաշագործութեամբ, և երեք
հարիւր տարուան միջոց եղած է ան-
ընդհատ առարկայ՝ ջերմեանդն յար-
գութեան հաւատացելոց, երբ 1672ին,
Աստուծոյ թղլ տալովը, փոտլիա՝ կա-
մենիցով 'ի միասին՝ ընկաւ ընդ իշխա-
նութեամբ թուրքաց, այն ատեն ոմանք
յեկեղեցեաց քրիստոնէից աւերեցան
քանդեցան, և ոմանք Մալիմանաց մըզ-
կիթ եղան: Բարեպաշտ հայկազունք՝
վախնալով որ չըլլայ զրկուին իրենց
սրբազան գանձէն, 'ի պատկերէ Տի-
րամօր, կեանքերնին վտանդի դնելով՝
պահապան եղան պատկերին: Այլագ-
գիք տեսնելով զՀայս՝ անձնանուէր ի-
րենց սրբատեղոյն, ուր անպակաս
էին, կասկածեցին որ հոն պէտք է ինի
պահուած նոցա մեծ հարստութիւնը,

ինն այդ Հրաշագործ պատկերը (1331), մինչև
ցայժմ 552 տարի կը լինի:

ուստի ուղիցին քանդել, աւարել այլ եկեղեցին. այլ Մայրն Ողորմութեան, Երանուհի կոչոն Մարիամ, արդեւք եղաւ նոցա, քանի քանի անգամ հրաշափառ, բոցածաճանչ աստ և անդ երկցաւ, իբրև թէ պաշտպանելով իւր 300 տարուան սիրելի բնակարանը. և այնպիսի ահ ազդեց, որ քանի մ'անգամ մոտենալով եկեղեցոյ պատերուն, վախով և ամօթապարտ ստիպուեցան յետ դառնալու: Հայք նեղուելով յայլազգեաց՝ որոշեցին առ ժամանակ մի հեռանալ 'ի կամենիցէ...:

Այլ չուզելով բաժնուիլ իրենց սըրբազան գանձէն, գաղտուկ մեկնեցան հետերին առած Տիրամօր պատկերը: Ողորմածն Աստուած պահեց զնոսա 'ի ցամաքի թշնամեաց ձեռքէն. այլ երբ կը ճանապարհորդէին Ա և ծովուն վերայ, սեռան հետամուտ զթշնամիս, և արտասուօք դիմեցին առ Աստուածաժայրն Հրաշագործ: Այդ խեղճ փրճակին մէջ Աստուծոյ կամաց հպարտակելով, կ'ընտրէին ամենայն ինչ կորսնցընել միայն թէ Աստուածամօր պատկերն չլինի աւար: Հասած էր ժամանակը որ Հայք ընկնին թշնամեաց ձեռք, այլ Աստուած գթութեան աջօք նայեցաւ առ ինքն յուսացեալս. յանկարծ փչեց մրրկախառն փոթորիկ, փրփրեցաւ ծովը, և լիք կը տատանէին զնաւերը, պատեց խաւարը, որոտունը, փայլալք, ճարճատիւն առագաստից և նաւուն չուանաց՝ սարսափ կ'ազդէին, տարերց պատերազմի միջոց: Կլլեց ծովը օտարաց բոլոր նաւերը. այլ Հայոցը՝ յորում էր պատկեր Երանուհոյ կուսին, թէպէտ երկար միջոց պատերազմեցաւ մրրկին և այնպէս զէմ, և մեծ ապէս վտանգուած, առագաստքն պատառ պատառ, մեծ կայմն միջարևի, յիրուսի հրաշքով, յայնդուլթեամբ հասաւ 'ի ցամաք: Մեծ վտանգէն ազատած ջերմեաներն պաշտօնարկուք հրաշագործ պատկերի Տիրամօրն, կրցան ազատ չունչ առնուլ. և շնորհակալ լինելով նորա գթալիր բարեխօսութեան առաջի Աստուծոյ, հրաշագերծ գանձովն անցան զնա.

ցին 'ի Մակեդոնիա: Հոն՝ ըստ ազգելոյ Տիրամօր, ապահով և յարմար տեղ մի պատրաստեցին սրբազան պատկերին, ինքեանք միշտ երկրպագուք և զհարանիւրք լինելով, զյուշութեամբ պահելով իրենց գանձը, գիշեր ցորեկ պաշտելով Երկնից Թագուհին: Երկար ժամանակ մնացին նոքա 'ի Մակեդոնիա, ընդ պաշտպանութեամբ Տիրամօր: Եւտով տարածուեցաւ Մակեդոնիոյ մէջ Ս. Պատկերին հրաշագործութեանց համբան. բազմութիւն ժողովրդոց 'ի զանազան պէտս՝ յերմ ազութիւք կը դիմէին առ նա. և նա՝ Պաշտպանն յուսացելոց, ինչպէս մինչև ցայսօր, կու տար ցոյց իւր առատ ողորմութեան, և ազաչաւորք մխիթարեալ կը մեկնէին նորա խորանէն: Տասը տարիէն վերջը ազդեցութիւն եղաւ ջերմեանին պաշտօնասիրաց Տիրամօր պատկերին՝ տանել զնա յիվով: Որովհետև հոն արդէն տարածուած էր համբաւ հրաշից Պատկերին, այն պատճառաւ մեծ հանդիսիւ, 'ի ցոյցս ջերմ հաւատոց ընդունեցան իվովցիք զՊատկեր կուսին, ինչպէս 'ի Մակեդոնիա, և անպակաս էին երկրպագուք առաջի պատկերին: Քիչ ատենէն Տիրամօրս հրաշք առ կարօտեալս և վշտոցեալս՝ 'ի դովաբանութիւն զրդեցին նաև բոլոր քաղաքը առ Երկնից Թագուհին: Այն ժամանակ նաև (1639) ողորմելով Աստուած քրիստոնէից՝ ազատեց զփոտլիա յօտարաց լուծէն...: Խորհեցան Հայք դառնալ 'ի կամենից, որպէս զի հանգչեցընեն Տիրամօր պատկերը իւր ընտրած տեղին: Մտտնալով կամեանիցի Հայք, կանգ առին Դուժքա կուշուած գեղը. վասն զի բարեպաշտ կա, մենիցիք կը փափաքէին պարտ ու պատշաճ յարգութեամբ և փառք ընդունել Երկնից Թագուհին՝ երկրպար խոնարհ բնակարանին մէջ: Անհամար բազմութիւն ժողովրդոց, ազնուականք և ռամիկք, դատուորք քաղաքին, փառաւորեալ և շքեղ ասպետք՝ դիմաւորեցին Պատկերիս՝ ուրախութեան երգօք և նուազօք, և առաջնորդեցին 'ի

քաղաք: Բոլոր քաղաքացիք երկար մի-
ջոց թնդալուցին օգը արախու թեան և
գովութեան երգօք, ՚ի պատիւ Մարիա-
մու կուսին:

Եւ որովհետև տաճարն, յորում կը
պատնուէր Պատկեր Աստուածամօրս
՚ի կամենից, Թուրքաց քաղաքին տի-
րելէն առաջ, գրեթէ քանդուած էր, այն
պատճառաւ գրին զնա ՚ի մատրան Ա-
ւետման Երանուհւոյ կուսին Մարիա-
մու, ¹ որ մօտ է Հայոց եկեղեցւոյն: Բանի
որ պատկերս այդ մատրան մէջ
էր, միշտ կը լինէին անգ հանդիսաւոր
պաշտամունք և քարոզք, որովք հռչա-
կէին հրաշք Պաշտպանին մերոյ: Սեան
զութեամբ զիտենք՝ որ այն միջոցին
երաշտութիւնը մեծապէս վտանգած է
դաշտաց, ցորենի և այլոց բուսականու-
թեանց, որով մօտալուտ սովը սարսա-
փեցուցած է գծողվուրդը: Այլ Տի-
րամօր Պատկերն ՚ի կամենից դառնա-
լուն պէս, բարեխօսութեամբ Երկնից
Թագուհւոյն, ուրախարար ցօղը կ'իջնէ
խերկիր, առառ անձրև կը թափեն ամ-
պերն. կը յադի երկիրն, կը կենդանա-
նայ և կը ծաղկի: Ուրախութեամբ կը
լեցուի մարդկանց սիրտը, տեսնելով որ
Բաշխողն երկնաւոր սլորմութեանց
խնդրեց յԱստուած որդւոյն՝ ժողովրդոց
կարեորը: . . .

Ձեռք կը զարնեն Հայք նորոգելու
Ս. Նիկողայոս եկեղեցին. կարեօր ա-
տաղճը արագ կը պատրաստեն, գոր-
ծաւորք անվորձ կ'աշխատին, հարուստ
և պաշտօնավար անձինք իբրև վորձա-
ւորք կը հայթայթեն կարեօր պէտքը:
Նոյն իսկ կանայք և տիկնայք ամէն գա-
սակարդէ պատիւ անձանց կը համա-
րին մանակցիլ գործոյն: Մեծի պա-
տոյ արժանաւորմբ մամերն՝ յօժարու-
թեամբ կրած են աղիւս, աւազ և կիր,
չնայելով ամենեկն ոչ ամուսն տաքուն,
ոչ անձրևի և ոչ այլ օդոց խառնակու-
թեան: Տաճարիս վերանորոգութիւնն
աւարտած է 1767ին, և նոյն տարին
բերուած է Աստուածամօր հրաշագործ

պատկերն ՚ի մատրանէ Աւետման,
յիկեղեցիս Հայոց, յոր կը պաշտի ցայս-
օր: — Ալլգիս աւանզութիւնք անընդ-
հատ կը հռչակեն զբանչելիս Երկնից
Թագուհւոյն. — այն քբանչելիք կեն
դանի պահուած են ազգայնոց սրտին
մէջ, և մշտնջեալոր պիտի մնան ա-
ւանզութեամբ, թէ ինչպէս Սրբուհի
կոյնն հասած է օգնութեան՝ ժանտա-
մահի միջոց, բժշկած է ախտաժեստ
և խեղանդամս, օղնած է դժբաղդու-
թեան և ցաւոց միջոց, ՚ի սովու և ՚ի
պատերազմի. դարձեալ թէ որպիսի
մեղաւոր դարձեալ եկած են Պատկե-
րիս զիմաց, և սրչալ թերահաւաք
դարձած են առ Քրիստոս՝ ազդեցու-
թեամբ Տիրամօրս:

Հին լեհաստօ աղօթագրքէն քանի
մը հատուած թարգմանելով՝ կ'աւել-
ցընեմք ստորև, որք ապացոյցք են վե-
րը գրուած աւանզութեանց:

Ա. Զերմ Նաշտուսը: « Մայր Աստու-
տու՛նոյ, Պաշտպան, քրիստոնէից, պաշտ-
պանեալ պահեա գրեակութիւն քա-
ղաքիս և բովանդակ փոստիոյ ՚ի թշնա-
մեաց հաւատոյս մերոյ և թագաւորու-
թեանս: Ունիմք մեք զհաւաստիս մայ-
րենի հովանաւորութեան քոյ, ոչ ՚ի
կարծ դատեցեալ, այլ ստուգութեամբ
հաւատարմացեալ. նախ ՚ի կամենից
ժամանակս ձեզս, սքանչելեզք հովա-
նաւորեալ, Սրբաձաբար կոյս, և ապա
՚ի Մակեդոնիս, և ՚ի Լով քաղաքի: Դու
՚ի սրբել քաղաքիս ՚ի թշնամեաց, հրա-
շափառտպէս դարձ արարեր այսրէն,
ուր և հանապազ գործես սքանչելիս,
՚ի ցոյց ողորմութեան քոյ »:

Բ. Գովուրիւն Մարիամու: « Գու-
վաբանեցէք զՄարիամ, հողմը և մրրիչք
և ամաք, պարիսպք և հաստատու-
թիւնք, ապառաժք և քարիւք, որք
չուրլ կայք կամենից քաղաքիս: Նա է
ձեր պաշտպան. նա՛ որ բնակին յիկե-
ղեցւոյ Հայոց պահպանէ զձեզ. նա՛ որ
ունի ընդ ոտիք զլուսին, զթշնամիս
առ ոտս իւր խոնարհեցուցանէ: Կայ

¹ Ըստ Անտոնիի նախ գրած են ՚ի մատրան

Նախավային, և ապա յեկեղեցւոյն Աւետման:

աներկեան դու փոռողիս յերեսաց ան-
հաւատից: Մի երկիրոյք միք 'ի ընդ
թշնամայն: Աստուածամայրս պահես-
ցէ և պահպանեսցէ միշտ զփոռողիս »:

Գ. Երգ: — « Չորեքհարիւր և այլ
տասնեակք ամբ անցին՝ յորմէ հետէ
թագաւորէն 'ի կամենից՝ Մարիամ.
տեղի բնակութեան ընարեաց նա զե-
կեղեցին Հայոց, ուր պաշտի պարսու-
պատշաճ յորդանօք, ուստի սփռէ ըզ-
միծ զողորմութիւն »:

Դ. Երգ: — « Մինչդեռ կամօք Որ-
դույ քո, վասն մեզաց մերոց, էանց
կամենից ընդ իշխանութեամբ այլազ-
դեաց, և հաւատարիմ ծառայք քոյին,
անձամբ չտի պաշտպան կացեալ քու-
մըդ պատկերի, ծովալու գնացին ընդ
Սեաւ ծով, 'ի խորտակել այլոց նաւուց,
նաւն՝ որ բարձեալ տանէր զքեզդ կեն-
դանադիր, ժամանեաց յանբոյթ նաւ-
հանգիստ »:

Ե. Լիբանիս: — « Սրբուհի Մա-
րիամ, հաստատութեանս այսմիկ (կա-
մենիցի) հաւատարիմ պահպան. Սրբ-
բուհի Մարիամ, բազմապատիկ պաշտ-
պան կողմանցս (փոռողից) հարստա-
հարեւոց յայլազեներից. Սրբուհի Մա-
րիամ, որ յայտնապէս երևեցար այլ-
ազդեաց 'ի վերոյ որման գաւթի եկե-
ղեցոյս Հայոց. Սրբուհի Մարիամ, որ
դնացեր տարագիր 'ի ձեռն հաւատա-
րիմ քոց ծառայից և ընդ ծով հա-
տեր զուդի. Սրբուհի Մարիամ, որ
հրաչիք զերծուցեր զծառայս քո 'ի
ծովակուր լինելոյ, և հաներ զնոսս 'ի
մրկաց 'ի խաղաղ նաւահանգիստ:

Սրբուհի Մարիամ, 'ի Մակեդոնիա
հուշակեալ սքանչելեօք:

Սրբուհի Մարիամ, որ յօտարութե-
նէ հասեր յիլով:

Սրբուհի Մարիամ, որ յելանեն թըչ-
նամեաց 'ի կամենիցէ, վաղվաղակի
դարձ արարեր 'ի սիրեցեալ քո տեղին:

Սրբուհի Մարիամ, որ մեծահանգէս
պատուով և պաշտամամբ հանգեար 'ի

սրբավայր քոյին. Սրբուհի Մարիամ,
որ 'ի ժամու սրածութեան՝ զապաւի-
նեալս առ քեզ՝ ողորմութեամբդ կե-
ցուցեր. աղօթեալ վասն մեր »:

Զ. Դարձեալ երգ առ Սրբունին Մա-
րիամ: — « Սրբուհի դու, որ ողորմու-
թեանց ես բաշխող, որ զգլորեալ մե-
զաւորն անդէն կանդնես, առ քեզ
համբառնամք զմիտս մեր և զսիրտ,
զքեզ փառաւորեմք. Դու ամուր և վա-
հան կամենիցի՝ 'ի չորեք հարիւր և ա-
ւելի ամաց հետէ. Դու ես պաշտպան և
բազդ համօրէն քոց ծառայից: Թշնա-
միք մեր խոստովան եղեն յայտնապէս՝
զի 'ի տալ մեզ Մարիամու զօգնութիւն,
երկիւղիւ իբրև երկաթ կապեցան աջ
բազուկք նոցա և խորտակեցաւ արու-
թիւն: Տեսեալ զքեզ բոցածածանչ ըմ-
բռնեալք մեծաւ երկիւղիւ 'ի փախուստ
դարձան թշնամիք, և վարեալք ան-
հնարին տագնապաւ՝ լքին զսրբավայր
քոյին: Ի յարձակել թշնամեաց 'ի վե-
րայ մեր խորժութեամբ՝ հաւատարիմ
սպասաւորք քոյին փախուցեալ 'ի հա-
լածչաց մահն 'ի նաւ, զքեզ կրելով 'ի
միասին: Դու քաջապէս պահեցեր ըզ-
նոսս 'ի Սեաւ ծովուն, ընդդէմ մըբը-
կաց և ալեաց խուռն կուտակելոց. զի
նոքս զքեզ ընդ ինքեանս կրելով, Տի-
բուհի, անվտանգ զերծան: . . . Դու գե-
ղեցկութիւն Հայոցս, դանձ անսպառե-
լի, պարգևեալ մեզ յերկնից. 'ի քէն է
մեզ ողորմութիւն. առ ո՞ ոք ձեռք քո յօգն
կարկառիցին՝ նա երկնչի յումեքէ ոչ:
Նենգութիւն և պատրանք թշնամեաց
հալին որպէս մամ առաջի քոյոց խոր-
հըրդոց: Հրապայք չարին և փորձու-
թիւնք՝ 'ի դիմելն մեր առ քեզ, 'ի փո-
չի լուծանին: Թագուհիդ երկնաւոր,
ըստ վաղեմի սովորութեան քում, իշ-
խեա 'ի վերայ մեր, և կառավարեա զաշ-
խարհս մեր: Տուր մեզ զցանկալին խա-
ղաղութիւն և զկերակուր չափաւոր 'ի
սնունդս որդեկաց քոց »:

Է. ԵՐԿ ԱՌ ՆՈՅՆ ՍՐԲՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ

Ո՛վ անըսպառ յորմութեանց Տիրուհի,
Երես յերկիր անկանիմք քո առաջի,
Աչք յարտասուս աղերսաւորք, անասան
Պահել ըզմեզ ընդ հովանեաւդ յաւիտեան:

Դու ես պաշտպան հանուրց սեռիս մարդկութեան
Ջարդ և պարծանք մեր աշխարհիս փոտոլեան,
Կոյսդ համբաւեալ, յեկեղեցւոյն Հայոց,
Երևեցար փայլակնացայտ 'ի հուր բոց,

Յառնուլ նոցա զայս մեր քաղաք 'ի մարտին:
Նոքա ինքեանք ոչ ուրացան, ասացին,
Ձի բոցավառ ըզսրբաւկայր քո տեսին,
Ընդ որ ապշեալ, յահ և յերկիւղ պատեցան:

Դու փրկեցեր ըզքո որեարդ հայկազեան,
Մինչ գընային հալածական 'ի ծովու,
Հետամուտ լեալ 'ի թընամեաց ահարկու.
Բեկեալ կայմիւ հաներ զնոսս 'ի յանքոյթ

Նաւահանգիստ, ըզթշնամիս կորուսեալ,
Բզնուս նոցին ախիւ գանձիւ ընկըմեալ:
Իսկոյն ծանեան մերքըն՝ զերծեալք հըրաշիւք
Ձի քո էին կոյս Տիրամայր այն արդիւնք:

Դարձ արարեալ այսրէն 'ի մերըս աշխարհ
Ի Լով քաղաք առեր հանգիստ և զադար.
Անդ համբաւեալ, աշխարհ վըկայ, ըստ որում
Ետուր կաղաց, կուրաց, խօթից բժշկութիւն:

Անտի ապա, ասպետք Լեհաց պար առեալ
Ըզքն, երէցք 'ի Դրլուժքա ներբողեալ
Փառք մեծաւ ածին ըզկոյսդ յայս քաղաք.
Ուր և իսկոյն եղեն յայտնի քոյին հրաշք.

Առատ անձրև՝ երաշտացեալն 'ի յերկիր
Յօղեալ՝ արար բազմապըտուղ կենսակիր:
Իրանեաւ երէցն ըզբանչելիսըդ յայտնի.

Որ կայր յերկար, լոյժ անդամք 'ի մահճի:

Պատգամ 'ի քէն եղև նըմա 'ի տեսեան
Դիմել առ քեզ յեկեղեցւոյն հայկական,
Ուր և թողեալ գմահիճ, ոտիւք քայլելոյն
Վազվազելով ըզկոյսդ օրհնեալ դարձ 'ի տուն:

Բազում են կաղք, կոյրք, գօսացեալք, հաշմանդամք,
Որոց գըտեալ ըզլոյս երկնից և զգընացք,
Թողեալ աստէն ցուպ գաւաղան ընդ անթով
Վերադարձան՝ օրհնեալ ըզքո մեծագով:

Սրբածութեան ժամուն՝ տեսին լուսաւոր
Ըզքոյ տաճար շուրջ բընակիւք մերձաւոր:
Գիտեմք բիւրիցըս մեք գըտակ հաւաստեաւ
Ձըպանչելիսդ ակն յանդիման աստ անբաւ.

Դու մըխիթար՝ որոց 'ի վիշտ տազնապին,
Ապաւէն ես մեղաւորաց զըրհին.
Դու գանձ անգին մեր կամենից քաղաքի,
Հըզօր պաշտպան փոտոլիացւոց զաւառի:
Կաս 'ի տախտակ, անաղարտ գոյն Գոյ զիմաց,
Երկնաւորի, այո՛, մատանց ես կերտուած:
Լէր մեզ պաշտպան, դու մայր ամբիծ, կոյս զըթած,
Արա՛ ընդ մեզ ըստ սրբագոյն Գոց կամաց:
Յաւերժաբար երկըրպագուք հմբ Գոյին,
Անտես արա ըզպարտիս մեր, թողութիւն
Մեղաց մերոց հայցեա՛. խընդրեմք, Տիրամայր,
Եւ յետ մահուան լէր մեր հոգւոց կենարար:

Կը շարունակուի:

Լ. ՔԵՐՈՎԵՎ Վ. ՔՈՒՆԵՐԵԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅՈՎԱԵՓԱՅ ԵՒ ԿՆՈՋ ՆՈՐԱ ԱՍԱՆԵԹԻ

ԴՍԵՐՆ ՊԵՏԱՓՐԷ ԳՐՄԻ ԱՐԵՂԻ ՔԱՂԱՔԻ

Իրանօր Առաջիկայ վէպս կը քաղենք Վանոցս մեռագրատան շառքնորի մը միջէն, ոչ միայն ի բրև հետաքրքրական կէս-սրբազան հնութեան պատասխի մը, և կամ անվաւեր՝ ցոյց յարգելի գրուած մը 'ի կարգէ անյայտի Ս. Գրոց, որով և ուսումնասէր կրօնադիտաց ուշադրութեան արժանաւոր, այլ որ ուղղակի մեր նպատակն է՝ իբրև մատենագրական արժեք ունեցող գողարիկ և ընտանի լէզուով նախնեաց՝ պատմական վէպ մի ընծայել զայն՝ մեր հարց հնութեանց և բարբառոյն մեծապէս յարգ տուող Բաղձմովպիս ընթերցողաց:

Եւ եղև յամին յառաջնումն, որ օր էր եօթններորդ ամսոյն՝ առաքեաց Փարաւոն զՅովսէփ շրջել ընդ ամենայն երկիրն Եգիպտացոց, եւ եկեալ հասեալ յութ և տասն օրն 'ի սահմանս Արեգ քաղաքի, և ժողովէր ցորեան յերկրին յայնմիկ իբրև զաւազ ծովու: Եւ էր այր մի 'ի քաղաքին այնմիկ, որ էր նախարար Փարաւոնի, և էր մեծագոյն քան զամենայն մեծամեծ Փարաւոնի 'ի խորհրդականութեան. և առնուն էր առն այնորիկ Պետրապիլէ, բուրժ Արեգ քաղաքի: Եւ էր զուստր մի նորա կուսան իբրև ութուտան ամաց, կոյս մեծ և գեղեցիկ կերպարանօք յոյժ քան զամենայն կուսանն իբրև 'ի վրայ երկրի. և ոչինչ ունէր 'ի գտտերացն Եգիպտացոց, այլ ամենևին նմանեալ գտտերաց Իսրայելացոցն: մեծահասակ էր իբրև զՍառա, և գեղեցիկ որպէս Հաբեհկա, վայելուչ

քան զՀապիլ: Եւ էր անուն նորա Ասանէթ. և չոգաւ հռչակ գեղեցկութեան նորա ընդ ամենայն երկիր. և խնդրէին զնա 'ի կնութեան ամենայն որդիք նախարարացն և որդիք մեծամեծացն և թագաւորացն, երկուսարդքն ամենեքեան և զօրաւորքն. և էր նախանձ և հակառակութիւն 'ի մէջ նոցա վասն Ասանէթայ, և պատրաստէին 'ի պատերազմել ընդ իրեարս վասն նորա: Եւ լուաւ վասն նորա անդրանիկն Փարաւոնի, և աղաչէր զհայրն իւր տալ նմա 'ի կնութիւն: Եւ ասէ ցնա Փարաւոն հայրն իւր. Ընդէր խնդրես զու կին անարգազոյն քան զքեզ, զի թագաւոր ես Եգիպտոսի. ո՛չ աւանիկ խոսեցեալ է վասն քո զըուստր սրբայնս Մովսարացոց:

Եւ Ասանէթ անարգէր և արհամարհէր զամենայն արամբք, և էր յոյժ հպարտ և ամբարտաւան առ ամենեւեան. և ոչ որ